ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության օդային և ջրային տրանսպորտի քաղաքականության բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 22- 33.9-Մ4-2)

Հիմնական գործառույթները՝

1) Մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

2) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառի վերաբերող սոցիալ-տնտեսական, հեռանկարային, ընթացիկ և զարգացման ծրագրերի նախագծերի մշակմանը.

3) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառնի մոնիթորինգի իրականացմանը.

4) մասնակցում է օդային տրանսպորտի շահագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների մշակմանը.

5) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառում գիտատեխնիկական առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցառումների մշակմանը.

6) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցությանը, իր իրավասության սահմաններում միջազգային կազմակերպություններում նախարարության շահերը ներկայացնելուն.

7) մասնակցում է առաջարկություններ ներկայացնելը պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում մասնակցի (բաժնետիրոջ) լիազորությունների իրականացման, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ենթակա մարմինների ու պետական հիմնարկների կառավարման վերաբերյալ.

8) մասնակցում է օդային տրանսպորտի բնագավառին վերաբերող տեխնիկական ակտերի ու ստանդարտների մշակմանը.

9) մասնակցում է օդային և ջրային տրանսպորտի ձևավորման և զարգացման քաղաքականության մշակմանը.

10) մասնակցում է օդային տրանսպորտի ոլորտում տեխնոլոգիական նորարարության նպատակային ծրագրերի մշակման և դրանց մոնիթորինգի իրականացման աշխատանքներին.

11) մասնակցում է մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման կազմակերպման աշխատանքներին:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,

• Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ,

• համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

• Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը՝ մինչև նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

• Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 01.10.2019թ.

• Աշխատավարձի չափը՝ 150799 (մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունինը) ՀՀ դրամ:

• Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, էլ. փոստ՝ n.kirakosyan@mta.gov.am

• Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

• դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/ պատճենները բնօրինակների հետ միասին, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,

• արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,

• անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: